Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-381-30.09.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 44-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում՝ «: Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից» բառերը փոխարինել «կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ» բառերով.

2) լրացնել 3.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետևյալ հերթականությամբ՝

1) Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ՝ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային Հեռարձակողների,
2) հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
3) մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
4) մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
5) սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները,
6) միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերի հեռարձարկման առաջնահերթությունների ու հերթականության համակարգի միասնական կիրառության սահմանումը՝ անկախ սփռման տարածքից, օպերատորից եւ հեռարձակողից:

2. Խնդիրները եւ կարգավորման նպատակը.

Առաջնորդվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ հոդվածով, ՀՀ գործող ցանցային օպերատորները իրենց տրամադրված տեսալսողական ծրագրերի տարածման հերթականությունը սահմանում են ինքնուրույն: Նման մոտեցումը առաջին հայացքից ընկալվում է օպերատորի գործունեության ազատություն, սակայն սպառողի համար առաջ է բերում օգտվելու անհարմարություններ եւ դժգոհություն, քանի որ հեռարձակվող ծրագրերը տարբեր հերթականությամբ են հասանելի հեռուստալսարանին:

Նախաձեռնության նպատակն է սահմանել Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերի եթեր հեռարձակման հերթականությունը:

Նախաձեռնության համար հիմք է հանդիսացել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի մոնիթորինգի արդյունքներ ու ստացված դիմումները:

3. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագիծը ընդունելու արդյունքում Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի արդյունքի սպառողները կկարողանան օգտվել հեռարձակվող ծրագերի նույնական հերթականությունից եւ հեշտությամբ ընտրել իրենց նախընտրելի ծրագիրը:

Տեղեկանք նախագծում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի **~~(այսուհետ՝ «Օրենք»)~~** 44-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում՝ «: Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից» բառերը փոխարինել «կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ» բառերով.

2) լրացնել 3.1-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետեւյալ հերթականությամբ՝

1) Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ՝ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային Հեռարձակողների,

2) հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,

3) մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,

4) մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,

5) սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները,

6) միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,

~~7) հեղինակազորված Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:~~

~~Հոդված 2.~~ **~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~**

<u>Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:</u>

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-381-30.09.2022-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**«Տեսալսողական մեդիայի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-381-30.09.2022-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի «(այսուհետ՝ «Օրենք»)» բառերը **և օրենքի 44-րդ հոդվածում լրացվող 3.1 մասի 7-րդ կետը հանել նախագծից**	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**«Տեսալսողական մեդիայի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-381-30.09.2022-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:»	Ընդունվել է	Ընդունվել է